ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 691 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6-Ի N 484-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01552199) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի օգոստոսի 6-ի «Կանաչ արահետ» գյուղատնտեսության աջակցության հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի դպրոցներում ինտենսիվ և հատապտղային այգիների հիմնում» ծրագրի մասին» N 484-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էյ ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01846699) 2026 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված՝ N 2026/06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շշալցված խմելու ջրի ձեռքբերում՝ 141,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օվալ պլաստիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01205053) 2026 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված՝ N 2026/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թղթե բաժակների մատակարարում՝ 308,334 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

28.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ